

ԿՐԿՆԱԳԻՐ ԱՐԾԱԹԱՊԱՏ ՄԱՇՏՈՅ ՄԸ

Ս. Ղազարի ձեռագիրներու ցուցակին երրորդ հատորը, որ լոյս տեսաւ վերջերս, կը պարունակէ 136 Մաշտոցներու մանրամասն եւ խզամիտ նկարագրութիւնը. ասոնցմէ յատուկ ուշադրութեան արժանի է թիւ 373 (Ձեռ. թիւ 2061) ձեռագիրը, որովհետեւ կրկնադիր ըլլալէ զատ՝ արծաթապատ ալ է:

Ձեռագիր այս Մաշտոցը Ս. Ղազարի մատենադարանին նուիրած է Տիար Ժաղ Մաթոսեան: Ներկայիս շատ լաւ վիճակի մէջ է, զրուած մագաղաթի վրայ, մաքուր բոլորով, կարմիր մելանով են խորագիրները, նմանապէս սկզբնատառերը, որոնք երբեմն թռչնադիր ալ են: Թղ. 3ա ունի կիսախորան մը՝ կապույտ, կարմիր եւ սև գոյներով, բաւական յաջող, բայց հեռու է արուեստի դորձ մը ըլլալէ. նոյն գոյնով կան բաւական թրւով լուսանցադարձեր:

Ձեռագրին գլխաւոր յիշատակարանը մեծ արժէք կը ներկայացնէ, որով հոս ամբողջութեամբ մէջ կը բերենք. (Թղ. 126բ.) «Փառք համազոյ եւ միանական անրաժանելի սուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հղ: Արդ զբեցաւ Մաշտոցս ի քաղաքի Սեբաստիոյ, ձեռամբ մեղապարտ զբռն Յովաստի սարկաւորի, յիշատակ դառածեալ հոգւոյ ի մուրս եւ ծնողաց իմոց Թաքէոս քահանայի եւ Ծահալաչին եւ պարոն Գրիգոր եղբարն իմոյ, որ փոխեցաւ առ Քրիստոս, եւ ձիւնին հոգուն: Այլ եւ Ծահրէ եւ գաւաղաց իւրոց տիրացու Պաղատաւրին, Իսկուպին եւ Մինասին սալվէ¹: Եւ որ յիշէ զմեզ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ ամէն: Գրեցաւ ի Թվին 222 (1548)»:

Նպատակէ դուրս է երկար խօսիլ զրիւն մասին, քանի որ վերջերս Հայաստանի մէջ Վ. Պ. Գեղորդեան հրատարակած է մանրագին եւ արժէքաւոր հատոր մը «Յովաստի Սեբաստացի, Բանաստեղծութիւններ» տիտղոսով: Հոն գրեթէ կատարեալ կերպով համադրած է այն բոլոր աղբիւրները, որ հասած են մեզի՝ Յովաստիի մասին: Մեր մէջբերած յիշատակարանը կու գայ ծանոթութիւն մը աւելի տալու զրիւն պարագաներուն մասին, զոր յարգելի բանասէրը նկատի չէ առած՝ աղբիւրի պակասէն: Կը յիշուի ձիւնի առնուով մէկը, որ Յովաստիի դուստրն է, որովհետեւ Թղ. 37ա-ի ստորին լուսանցքին վրայ կը գրէ. «Վայ դիւ, ի յայս վայր հասեալ զեղեցիկ դուստրն իմ ձիւնի չար պահու գիտեալ մեռօ վասն մեղաց իմոց, եւ խիստ եմք չուարել»: Գեղորդեան² հիմնուելով Յովաստիի մէկ յիշատակարանին վրայ, կ'ուզէ եզրակացնել թէ զրիւն իր բոլոր ընտանիքով նուիրուած է զրուածութեան արուեստին. իր այս ենթադրութիւնը կարելի է հաստատել մեր ներկայ ձեռագրով՝ որ կրկնադիր Մաշտոց մըն է. քերուած է նախկին Մաշտոցը, հաւանաբար նոյն ինքն զրիւն կամ անոր պարագաներէն, եւ զրուած է ներկան:

Ձեռագրին առաջին մասը շատ յաջող կերպով մաքրուած է, բայց կէսէն անդին աւելի նուազ չափով, որով՝ նոյն իսկ պարզ աչքով կարելի է շատ մը բառեր կրկնադրուել, ասոնց զփութարութեան: Նախկին Մաշտոցը բաւական մեծ եւ ստուար հատոր մը պէտք է եղած ըլլայ, որովհե-

տեւ երկսիւն զրուածին ունի, իւրաքանչիւր սիւն 8 հրգմար. լայնքով. երկու սիւններուն միջեւ 1,5 հրգմար. պարագագութիւն մը կայ, նոյնպէս երկու կողմի լուսանցքները 5 հրգմար. լայնք ունին. այսպէսով կարելի է եզրակացնել թէ իւրաքանչիւր էջ 27-30 հրգմար. լայնք ունի: Իսկ երկարութեան մասին զփութար է հաշիւ մը ընել, քանի որ ներկայ Մաշտոցը փոքրագիր է (18×12,5 հրգմար.), ուստի կարելիով զործածած է նախկին ձեռագիրը: Բայց 30 հրգմար. լայնքով էջի մը կարելի է 40 հրգմար. երկարութիւն տալ:

Այս հնագոյն Մաշտոցը ԺԲ-ԺԳ դարու դորձ կը թուի ըլլալ, դատելով անոր մեծութենէն, զիրէն եւ զարդերէն: Գիրը մանր երկաթագիր է. նման գիրով ձեռագիրներու շատ սակաւ կը հանդիպինք ԺԲ-ԺԳ դարերուն. իսկ անկէ ետք՝ շատ հազուադիւրս կերպով: Բացի ասկէ, ձեռագիրը քերուել զրուածին մասը մաքրած առնել՝ խնայած է անոր լուսանցադարձերուն, ձգած է չուրջ վեց հատ (Թղ. 2բ, 18բ, 48բ, 59ա, 93բ, 110ա), որոնք հին ձեռագիրներու լուսանցադարձերուն պարզութիւնն ու գոյներն ունին: Հետաքրքրական է նշմարել լուսանցադարձերուն մէջ ԼԳ, ԼԵ, ԼԸ գիրերը, որոնք նախկին Մաշտոցին կանոններու թիւերը ցոյց կու տան, որոնցմէ կարելի է հետեւեցնել թէ չուրջ 40 կամ աւելի կանոններ կը պարունակէր, այսինքն ներկայ մեր թիւ 457 երկաթագիր Մաշտոցին մեծութիւնն ու հաստութիւնը ունէր: Իսկ մեր հաստատածը՝ թէ ձեռագիրը նախապէս Մաշտոց մըն էր, հիմնուած է Թղ. 45ա, 77ա, 87ա, 112ա ստորին լուսանցքներու քերուած զրուածներուն վրայ, ուր կը յաջողինք կարդալ. «Քհ. թաղ», եւ (Թղ. 135բ) «Ձուր» (աւրհնէք):

Ինչպէս վերեւ յիշեցինք, ներկայ ձեռագիրը արծաթապատ ալ է. առջեւի եւ ետեւի կողքերուն վրայ աղուցուած են ձեռագրին մեծութեամբ արծաթեայ կողքեր, որոնք շատ հաւանաբար ձեռագրին առաջին կազմի մասն էին: Եւ իրա-

պէս, եթէ խնամքով վերցնելու ըլլանք առաջին կողի արծաթ գամերը, կը տեսնենք թէ ձեռագիրը միւս բոլոր ձեռագիրներու նման տախտակ կաշկարատ է, պարզ դրոշմադարձերով. կողքին ճիշտ կեղծոնը կը տեսնուին գամերու ծակեր. շատ հաւանաբար նախապէս կար մետաղէ խաչ մը, որ հանուած է արծաթէ կողքերը աղուցուած ժամանակ: Մեր ձեռագիր Մաշտոցը, ինչպէս տեսանք, զրուած է 1548-ին. անկէ չուրջ մէկ դար վերջ է որ արծաթ կողքերը զրուած պէտք են ըլլալ, հետեւեալ պատճառին համար:

Ս. Ղազարի արծաթապատ ձեռագիրներու շարքին, բացի կրկնադիր արծաթապատ Մաշտոցէն, կը գտնուին երկու հատ, որոնց աշխատութիւնները գրեթէ նման են իրարու, անշան տարբերութիւններով. երկուքն ալ ունին միւսնոյն մեծութիւնը (13,3 × 10 հրգմար.): Ասոնցմէ մէկը՝ միայն արծաթեայ կողք մըն է, առանց ձեռագրի. պատրաստուած է Աւետարանի մը համար, ինչպէս կոնակի զրուածներէն կը հասկնուի. իսկ երկրորդը (Ձեռ. թիւ 1968) Տոնացոյց մըն է, ու կոնակի զրուածին վրայ կը կոչուի Երգարան: Երկու արծաթեայ կողքերուն առաջին երեսը լի է Հին Կտակարանի դէմքերով. կեղծոնը՝ Եսայի մարգարէի տեսիլը կը ներկայացուի (4,2×8 հրգմար.): Պատկերին ճիշտ կեղծոնը կայ բոլորածեւ սիւնադարձ տաճար մը՝ զրուած ամպերու վրայ. տաճարին դուռը կիսաշափ բաց է: Տաճարին վերեւ բազմած է Աստուած, զահի մը վրայ. ձախ ձեռքով բռնած է խաչածայր գունդ մը՝ որ աշխարհը կը ներկայացնէ, եւ որ խորհրդանշի է իր ամենակարողութեան. աջին ունի արքունի մականը. գլխուն ունի պարզ թաղ մը, երկար մագեր ու պատկառելի մօրուք. հաղած է արծաթ փիլոն, որու ծայրերը կը միանան կուրծքին վրայ: Գահին աջին ու ձախին՝ կան վեց թեւեւ սերուրկներ եւ երկու պարզ հրեշտակներ. երրորդ հրեշտակ մը ունի լիով բռնած է կրակը ու կ'երկարէ Եսայի մարգարէի բերնին, որ պատկերներէն

1. Սալվէ բառը առկա է վերեւ զրուած է:

2. Գեղորդեան Վ. Պ. Յովաստի Սեբաստացի, Բանաստեղծութիւններ, Երեւան, 1964, էջ 20:

մէկուն մէջ յոտնկայս, միւսին մէջ աւելի ծնրադիր, բերանարաց, կ'ընդունի կրակը: Այս պատկերին երկու եզերքները կան զոյգ զոյգ մարդարէներու նկարները, իւրաքանչիւրը առանձին սիւնադարձ կամարի մը մէջ, որու ստորեւ զրուած է մարդարէին անունը. ընդամէնը 24 նըկար, հետեւեալ կարգով. կեդրոնական պատկերին ձախակողմը կան չորս զոյգ նկարներ. Մովսէս եւ Յեսուս, Յոր եւ Սամուէլ, Նաթան եւ Դաւիթ, Եղիա եւ Եղիսէ: Ձախին, կան Ուսէէ եւ Ամոյս, Միքիա եւ Յովէլ, Յովնան եւ Նաուամ, Ամբակում եւ Սոփոնիա. իսկ պատկերին ստորեւ կան Եսայի, Երեմիա, Եղեկիէլ, Մաղաքիա, Ջաքարիա, Արդիու եւ Անդէ մարդարէներու նկարները, որոնք ձեռքերնին դիրք մը ունին: Արծաթեայ կողքերուն երկրորդ երեսները Նոր Կտակարանէն զրուած մը կը ներկայացնեն. իսկ պատկերին եղերքը կան 12 առաքեալներու դէմքերը. իւրաքանչիւրը ունի չարչարանքի գործիքը՝ որով մարտիրոսացած է. ասոնց ալ իւրաքանչիւրին տակ զըրուած է անունը: Կողքին կեդրոնը կայ Յիսուսի նկարը (4,7×9,8 հզմդր.). հոս ալ, առաջին կողքին նման, կայ զեղեցիկ, երեք յարկանի բոլորածեւ տաճար մը, երեք յարկերն ալ սիւնադարձ, ու սիւններուն միջանկեալ՝ պատուհաններ. տաճարը կը վերջանայ կտր զմբէթով մը, որու երկու կողմերը կան աշտարակներ՝ բարձրացած տաճարին երկրորդ յարկէն: Հեռուն կը տեսնուի ուրիշ աշտարակ մը, բարձրացած դետնէն: Տաճարին առջեւ կայ Յիսուս, չընդադադնալ իր աշակերտներէն. բոլորն ալ լայն վերարկուններ հագած են. Յիսուս ձեռքերը բարձրացուցած է ու ցոյց կու տայ տաճարը, և խօսելու դիրքի մէջ է: Պատկերին ձախակողմը վերէն վար կան Պե-

տրոս, Պօղոս, Անդրէաս եւ Յակոբոս առաքեալներու դէմքերը. աջին՝ Բարդուղիմէոս, Յակոբ, Սիմոն եւ Թադէոս առաքեալները. իսկ ստորեւ՝ Թովմաս, Փիլիպպոս, Բառնարաս եւ Մատթէոս առաքեալներու դիմապիծերը:

Ճիշտ այս երկու արծաթեայ կողքերուն զարդերով է նաեւ մեր ներկայ Մաշտոցը, այն տարրերութեամբ՝ որ սա քիչ մը աւելի մեծադիր է: Այս նմանութենէն մեկնելով՝ կ'ուզենք նոյն շրջանին, նոյն տեղոյն եւ գրեթէ նոյն տնձին վերադրել ներկայ թ. 2061 Մաշտոցին երկու արծաթեայ կողքերը, որոնք իրարու միացած են եօթը արծաթեայ չլթաներով, որոնցմէ երեքը խախտած են իրենց տեղերէն: Մաշտոցին արծաթեայ կողքերը ոչ մէկ յիշատակադրութիւն կը կրեն վրանին, մինչ վերեւ յիշուած երկուքը՝ կըռնակի կողմէն ունին արձանադրութիւններ հետեւեալ կերպով. «Երգարանս այս արեալ հայալ ընչիս իւր, զարդարեցի արծաթաւ Կեսարիա(յ) քաղաքին, անարժան ցեւոք, արծաթագործ Շահմիրին Մ. Յակոբ, թիւն Յայոց Ռձի (1671) վասն յիշելութիւն ամենա(յն) ժամ եւ դոհանալ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Երկրորդ կողքը շինուած է շուրջ քսան տարի աւելի ուշ եւ ունի հետեւեալ զրութիւնը. «Աւետարանս այս արեալ հայալ ընչիս իւր, զարդարեցի արծաթաւ Կեսարիա(յ) քաղաքին, անարժան ցեւոք, արծաթագործ Մալխասին Մ. Կարապետ, թիւն Ռձի (1691) վասն յիշողութեան ամենա(յն) ժամ եւ դոհանալ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Ենթադրութիւնս աւելի կը հաստատուի՝ եթէ նկատի առնենք որ Սերաստիա զրուած ձեռադիրը շատ հեռու չէ Կեսարիայէն:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

ՆՈՐ ՆԻԹԵՐ

ԵՐԵՄԻԱ ՉԷԼԵՊԻ ՔԷՅՕՄԻՐՃԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Ա.

ԱՆՏԻՊ ՏԱՂ ՄԸ ԱՊՐՈՅ ՉԷԼԵՊԻ ՄԱՍԻՆ

Գրչապիրներու հաւաքածոյիս մաս կազմող ժէ. դարէն Աղուեսադիրք մը ունի նաեւ հետեւեալ տաղը՝ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի զրչէն առ Ապրոյ (Արրահամ) Չէլէպի, ժամանակուան մե-

ծաղղեցիկ եւ մեծահարուստ դործիչ հայ վաճառականը: Երեմիա Չէլէպիի այս տաղը, զոր առաջին անգամ հոս հրատարակելով մեր բանասիրութեան ուշադրութեան կ'ընծայենք, ոչ միայն անտիպ է, այլ եւ բոլորովին անծանօթ կը մնայ: Նախ տաղը հոս կը հրատարակենք, անոր կցելով ինչ ինչ անդրադարձումներ:

Էս քեզ ողջոյն ով սիրելի
Հարց ու բարեւս ընկալ եւ այլն ի կարգի,
Եւ հարցանեմ զհրամանքդ ըստուղիւ սրտի,
Բարի կեալդ յերկրի ի յայսմ աշխարհի:

Իկեսեալ աղաչեցի զո(է)րն ամենի.
Երկար ամօք պահէ ի վ(ե)ր(այ) երկրի.
Ձուարթ պայծառ տեսրդ նման է լուսնի,
Շքեղափայլ փայլեալ ի մէջ հողածնի:

Խնդրեմ յապէնիաղ ա(ստուա)ծն.
Անիործ եւ անսայթաք պահէ զքեզ յերկրի.
Դու իմ պարծանք կենացս եւ սիւն իմ սրտի
Հողոյս հողի աշացս լոյս սիրելի:

Անմահ եւ համարձակ դոչեմ ատենի.
Բարձր հըղաւր չընաղ եւ զեղղեղելի.
Ահա սիրտ իմ վառեալ ի յերկինս աւդի,
Բորբոքելով այրիմ ի մէջ վտանդի:

Ձուսիմ ո'չ սիրելի, ո'չ աղդ մի բարի,
Խորհրդակից լինել բորբոքեալ սրտի.
Քեզ եմ ապաւինեալ ի յոյս ամենի
Որ նա հասուցանէ զքեզ ի տեղի:

Քեւ մեք ուրախանամք ի վ(ե)ր(այ) երկրի
Կարաւտ ի քէն անկեալ կամ ես ի մէջ տղմի
Սիրասնունդ բորբոք եւ յոյժ նազելի
Որ դաս դու շիջուցես կրակն իմ սրտի: